● ԵՐԵՒԱՆԻ վեց հանրակրթական վարժարաններ ուսումնական նոր տարեշրջանը պիտի դիմաւորեն հիմնականներէն վերանորոգուած դպրոցական շէնքերով: Մասնակի վերանորոգման աշխատանքներ կատարուած են նաեւ մնացեալ 188 վարժարաններուն մէջ:

● ԿՐԿՐՈՂՆԵՐՈՒ ՏԱՆ մէջ, Հինգշաբթի, 29 Օգոստոսին տեղի ունեցաւ կլոր սեղան-քննարկում, որ նուիրուած էր դպրոցներու մէջ մարմնամարզի դասընթացներու կարեւորութեան: Գնահարկումին մասնակցեցան բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու եւ դպրոցներու մարզական դաստիարակութեան մասնագէտներ, կրթութեան եւ գիտութեան նախարարութեան ներկայացուցիչներ եւ վարչապետը ընդգծեց ՍՈՒՍԵՆԻՆԻ կլոր սեղանի մասնակցեցող ընդգծեց ՍՈՒՍԵՆԻՆԻ կլոր սեղանի մարմնամարզական դաստիարակութեան կարեւորութիւնը եւ արտաշայտուցեց այն բազմաթիւ դժուարութիւններուն մասին, որոնք պիտի կը զուարթան մասնագէտներուն առջեւ: Պետական գերատեսչներու կողմէ կատարուած վարկերուն մօտաւորապէս 80 առ հարիւրը պիտի կազմեն առեւտուրի եւ սպասարկման ճիւղերուն յատկացուած վարկերը:

● ԿՐԿՐՈՂՆԵՐՈՒ ՍՈՒՍԵՆԻՆԻ կլոր սեղանի շարքին ներկայացուած էր Կրթութեան նախարարութեան կողմէ կատարուած վարկերուն մօտաւորապէս 80 առ հարիւրը պիտի կազմեն առեւտուրի եւ սպասարկման ճիւղերուն յատկացուած վարկերը:

● ԿՐԿՐՈՂՆԵՐՈՒ ՍՈՒՍԵՆԻՆԻ կլոր սեղանի շարքին ներկայացուած էր Կրթութեան նախարարութեան կողմէ կատարուած վարկերուն մօտաւորապէս 80 առ հարիւրը պիտի կազմեն առեւտուրի եւ սպասարկման ճիւղերուն յատկացուած վարկերը:

ONE SECOND IS ENOUGH...  
Արհեստը կը Պատահէ ԵՐԿԱՅՐԿԱՆ ՄԸ ՄԵՋ...  
...BUT WE USE THEM ALL.  
...ԻՍԿ ՄԵՆԻ ՆԵՐԿԱՅ ԵՆԻ ԱՄԸՆ ԵՐԿԱՅՐԿԱՆ.

ԱՖՏԻԼ AFHIL

Սփտիկ Ենք, Բ. Յարկ, 7ՅՆ, ԵՆ ԵՆ Յարկ. (01) 262231-242556-242557  
Լոռ. AFED, 24մե օճոց, Ել. and Fax: (01) 262231-242556-242557

Հ.Յ. Գ. ԼԵՍ. ՄԱՆԱԿՅԻՐ ԳՐԵԱԿԱՆՔԻՆ

Այսպէս կ'արժէ «Ռուբէն Տեր Սիմոնեան» վարժարանի «Եղիկ Գալայեան» գրադարանի հիմնումին համար գրքահաւաքին մասնակցիլ փափաքողները կրնան դիմել ԼԵՍԻ կեդրոն, ամէն օր ժամը 6:30Ը սկսեալ կամ հեռաձայնել՝  
03 - 802774 քիւն:

# ԵՐՈՒՄԱՂԷՍԻ ԹՆՃՈՒԿԸ ԵՒ ՀԱՅՊԱՏԿԱՆ ԿԱՌՒԱԾՆԵՐԸ

Յունիսի 17ին իսրայելեան բանակը գրաւեց Հայ Առաքելական եկեղեցուն՝ Երուսաղէմի պատրիարքարանին պատկանող տարածքները: Պատրիարքարանի ներկայացուցիչները փորձեցին համոզել Իսրայէլի պաշտպանութեան նախարարութեանը՝ չեղեալ համարել գրաւումը, հրամանագիրը, սակայն ապարդիւն է: Դրանից յետոյ, հարցի լուծումը գտնելու եւ միջազգային հանրութեան ուշադրութիւնը գրաւելու նպատակով, Երուսաղէմի պատրիարքարանը որոշեց դիմել Իսրայէլի բարձրագոյն իրաւական դատարան:

Հին Երուսաղէմում, որն արաբա-իսրայէլեան հակամարտութեան հիմնահարցերից մէկն է, կայ չորս թաղամաս՝ հրէական, իսլամական, քրիստոնէական (յոյն - լատինական) եւ հայկական: Հայկական թաղամասի դերն այդ հակամարտութեան մէջ բաւականին մեծ է: Ստորեւ՝ հարցի պատմութիւնը եւ ստեղծուած ներկայ վիճակը:

## ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայկական համայնքը Երուսաղէմում գոյութիւն է ունեցել դեռեւս Տիգրան Մեծի ժամանակներից: Հիմնականում այն հայերն էին, որոնք առեւտուր էին անում Հալէպի ու Գամակոսի հետ եւ այդ քաղաքների միջոցով՝ Երուսաղէմի: Քրիստոնէութեան ընդունումից յետոյ եւ յատկապէս իսլամացումից արշաւանքների ժամանակ Երուսաղէմի հայերի թիւը զգալիորէն աճեց: Արդէն եօթներորդ դարում՝ նախկինում կառուցուած եկեղեցիների եւ վանքերի հիման վրայ այստեղ ստեղծուած է հայկական պատրիարքարան: Առաջին պատրիարքը՝ Աբրահամը, որոշ տեղեկութիւնների համաձայն, հանդիպել է Մոհամմէտ մարգարէի հետ եւ հարկ վճարելու նախապայմանով ստացել Ս. Յակոբի եկեղեցին եւ Փրկչի գերեզմանի տարածքը: Այդ ժամանակ հայերի մեծ մասը բնակուած էր Սիոնի վրայ գտնուող հայկական փողոցում: 1888 թուականին սուլթան Ապտիւլ Համիտը Երուսաղէմի նորընտիր պատրիարք Յարութիւնին ուղղում է մի ֆարման, համաձայն որի Երուսաղէմի պատրիարքութեան հովանու տակ էին անցնում Երուսաղէմի, Նապլուսի, Թրիփոլիի, Կազալի հայերը, եթովպիացիները, ասորիները եւ դպիրները: Այդ ֆարմանը, լինելով Երուսաղէմի պատրիարքութեանը վերաբերող փաստաթուղթ, փաստօրէն, ուժի մէջ է առ յայտ:

Բնականաբար հայերի քանակը Երուսաղէմում ժամանակի ընթացքում փոփոխուած էր: Ներկայիս Երուսաղէմի հայ բնակչութեան մեծ մասը Եղեւնի պատճառով գաղթածներն են: 1947 թուականին հայերի թիւը Երուսաղէմում տասնհինգ հազար էր, սակայն այսօր արանք երկու հազար են, որոնցից միայն վեց հարիւրն ունի Իսրայէլի քաղաքացիութիւն: Հրէական թաղամասը Հին Երուսաղէմում ամենամօտն է հայկականին եւ միակն է, որտեղ հրեաները մեծամասնութիւն են կազմում (88 տոկոս, 2100 մարդ):

## ԵՐՈՒՄԱՂԷՍԻ ՄԱՍԻՆ

Իսրայէլա-պաղեստինեան հակամարտութիւնը վաղուց դուրս է եկել իր անուանման սահմաններից եւ դարձել է արաբների եւ հրեաների համընդհանուր հակամարտութիւն, որի մէջ ի սկզբանէ ներգրուուած էին նրանք որոնք: Եւ Երուսաղէմի հարցն այս հակամարտութիւնում չափազանց կարեւոր դեր է խաղում: Լինելով երեք միաստուածեան կրօնների սրբավայրերի քաղաք՝ այն միտն եղել է կառահիմնով: Քրիստոնեաների համար կարեւորագոյն սրբավայրը Փրկչի գերեզմանն է, որն, ինչպէս յայտնի է, ազատագրում էին խաչակիրները: Հրեաների համար՝ Լացի պատն է, Սողոմոնի իմաստունի տաճարը՝ այն միակ պահպանուած տաճար է: Իսլամների համար սրբավայր է Աբսա մզկիթը, որտեղից համբարձուել են ուր վերադարձել էր Մոհամմէտ մարգարէին իր «գիշերային ճանապարհորդութիւնից», այսինքն՝ Ալլահի հետ հանդիպելուց եւ գրուցելուց յետոյ: Բացի այդ, թէ՛ հրեաները եւ թէ՛ պաղեստինցիները համարում են Երուսաղէմն իրենց պետութիւնների մայրաքաղաքը, ուստի եւ ոչ ոք չի ուզում զիջել:

Իր երկար պատմութեան ընթացքում Երուսաղէմը տեսել է բազմաթիւ պատերազմներ, աւերածութիւններ եւ կորուստներ: Հին եգիպտացիները, բաբելոնցիները, ասորեստանցիները, հռոմէացիների արշաւանքներն անընդհատ ձեւափոխում էին քաղաքը թէ՛ արտասանակն եւ թէ՛ ազգային կազմով: Եւ ժամանակի ընթացքում ձեւաւորուեց այն իւրայատուկ միջոցները, որը յատուկ է այսօրուան Երուսաղէմին եւ որի շնորհիւ տարբերուած է աշխարհի բոլոր քաղաքներից:

## ՀՐԵԱՆԵՐԻ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

19րդ դարի վերջում հրէաներն աշխուժացրելու են իրենց գործողութիւններն Իսրայէլ պետութեան վերստեղծման ուղղութեամբ: 1879 թուականին Պազլուում անց է կացուած Համաշխարհային Սիոնական կազմակերպութեան (ՀՍԿ) առաջին համագումարը, որի ընթացքում քննարկուած եւ ընդունուած է սիոնական շարժման ծրագիրը՝ իր առաջնային նպատակն ունեցողով՝ «Ազգային տան» ստեղծումը: Այս ծրագրի իրականացման շրջանակներում ստեղծուած են մի շարք կազմակերպութիւններ, որոնցից երկու ամենանշանա-

ւորն էին Հրէական Գաղութացման Բանակը (1899) եւ Հրէական Ազգային Հիմնադրամը (1901): Վերջինս շուտով հիմնուած է իր մասնաճիւղը՝ Անգլո-պաղեստինեան դրամատուները: Ծրագրի հիմնական նպատակն էր հրեաներով բնակեցնել այն տարածքները, որտեղ ժամանակին գտնուած էր Իսրայէլի պետութիւնը: Այդ նպատակով հիմնադրամը սկսում է արաբ աւատատէրերից կալուածքներ գնել (1914 թուականին արդէն իսկ գնուել էր մօտ 450 հազար տէնտում հող), որտեղ եւ հաստատուում են «Աւետեաց երկիր» վերադարձած հրեաները: Համաշխարհային Սիոնական կազմակերպութեան գործունէութիւնն աշխուժանում է 1920 թուականի Ապրիլին տեղի ունեցած Սան Ռեմոյի խորհրդաժողովից յետոյ, երբ Մեծն Բրիտանիան ստանում է Պաղեստինի վերահսկողութիւնը: Այս փաստը մեծապէս նպաստում է 1920-1929 թուականների Պաղեստինում մօտ 100,000 հրեաների հաստատուելուն: Համաշխարհային Սիոնական կազմակերպութեան օգնութեամբ Պաղեստինում սկսում է ձեւաւորւել համայնքի ղեկավարման վարչամեքենան՝ ապագայ Իսրայէլի պետական վարչամեքենայի նախտիպը:

20րդ դարի 30ական թուականներին եւ Երկրորդ Աշխարհամարտի տարիներին նացիական Գերմանիայի հակահրէական քաղաքականութեան հետեւանքով Եւրոպայում բնակուող հրեաներից շատերը տեղափոխուած են Պաղեստին: Այդ ժամանակ Պաղեստինում հաստատուածները թիւը յստակ չի կարելի ասել, քանի որ նրանցից շատերի մուտքն օրինական չէր: Բնականաբար այս ամէնը չէր կարող չառաջնորդ Պաղեստինի արաբ բնակչութեան դժգոհութիւնը: Ի պատասխան հրեաների աշխուժ ներհոսքի, Պաղեստինում սկսում է ձեւաւորուել մի համակարգ, որը եւ դառնում է պաղեստինեան դիմադրութեան հիմքը:

## ԱՇԽԱՐՀԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ Համաշխարհային Պատերազմից յետոյ Համաշխարհային Սիոնական կազմակերպութիւնը սկսում է աշխուժ բանակցութիւններ վարել խորհրդային Սիոնեան եւ Միացեալ Նահանգների ղեկավարութիւնների հետ ու ստանում է Մ. Նահանգների նախագահ Թրումանի աջակցութիւնը: 1945 թուականի Օգոստոսին նա յայտարարում է Պաղեստինում 100,000 հրեաների վերաբնակեցման նպատակայարմարութեան մասին: Մեծն Բրիտանիան, անհանգստացած այդ յայտարարութիւնից, մի քանի ստորաբաժանում է ուղարկում շրջան:

Անգլիացիները գիտակցում էին, որ վաղ թէ ուշ ստիպուած են լինելու հրաժեշտ տալ Պաղեստինից եւ ամէն ինչ անուծ էին՝ հարցի առևելի արդիւնաւէտ լուծումը գտնելու:

Բրիտանիայի վերջին փորձն այսպէս կոչուած «Մորիսնի ծրագիր»ն էր, ըստ որի շրջանում ստեղծուած էին հրէական եւ պաղեստինեան երկու ինքնավար շրջաններ եւ երկու անգլիական վերահսկողութեան ենթաշրջաններ: Սակայն այս ծրագիրը նոյնպէս յաջողութեամբ չպատկուեց, եւ անգլիացիները կորցրեցին իրենց գերիշխանութիւնն այդ տարածքում:

1947 թուականի Նոյեմբերի 29ին ՄԱԿի Անվճարանութեան խորհուրդի թիւ 181 բանաձեւով շրջանում ստեղծուեցին երկու անկախ ժողովրդավարական պետութիւններ, որոնք պարտաւորուած էին բարիդրացիական յարաբերութիւններ հաստատել միմեանց հետ եւ առեւտրատնտեսական յարաբերութիւններ զարգացնել:

Արաբական երկրները չընդունեցին այդ որոշումը, եւ 1949 թուականին, երբ հուլիսուց իսրայէլի Հանրապետութիւնը, Անդրյորդանանի, Իրաքի, Սուրիայի, Լիբանանի եւ Եգիպտոսի միասնակ գործերը ներխուժեցին Պաղեստինի տարածք: Նոյն թուականին Յունաստանի 7ին, մեծ տէրութիւնների օժանդակութեամբ, ռազմական գործողութիւնները դադարեցուցին:

Այս պատերազմի պատճառով հակամարտութեան սահմաններն ընդլայնուեցին: Իսրայէլա-պաղեստինեան հակամարտութիւնը վերածուեց արաբա-իսրայէլեանի: Պատերազմի աւարտից յետոյ Իսրայէլը կնքեց անձուտ պայմանագրեր, որոնց հետեւանքով Արեւելեան Ափը եւ Արեւմտեան Երուսաղէմն անցան (ժամանակաւորապէս) Յորդանանին, իսկ Կազալի հատուածը՝ Եգիպտոսին:

1950 թուականին հուլիսուց Յորդանանի Հաշիմեան թագաւորութեան որոշումը՝ ժամանակաւորապէս իրեն միացնել պաղեստինեան տարածքները, պաղեստինցիների խիստ դժգոհութիւնն առաջացրեց: Կազմակերպուեցին բողոքի ցույցեր եւ ահաբեկչութիւններ, որոնցից մէկի ժամանակ սպանուեց Յորդանանի Ապտալա Ա. թագաւորը: Պատերազմն առավ բերեց մէկ այլ բարդագոյն խնդիր՝ գաղթականների խնդիրը: ՄԱԿի տուեալներով՝ 1950 թուականին գաղթականների թիւը մօտ 860 հազար էր, իսկ պաղեստինցիների տուեալներով՝ 1,1-1,3 միլիոն: ՄԱԿի թիւ 194 բանաձեւով գաղթականները գոյու-

թեան փաստն ընդունուեց, եւ նրանց առաջարկուեց կամ վերադառնալ հայրենիք կամ՝ մտանալ փոխհատուցում:

1967 թուականի Յունիսի 5ին սկսուեց «Վեցօրեայ պատերազմը», որի ընթացքում Իսրայէլը գրաւեց պաղեստինցիների վերջին տարածքները: Եւ միայն ՄԱԿի թիւ 242 բանաձեւն արաբների վերադարձեց տարածքների մի մասը: Այդ ժամանակ արդէն ձեւաւորուել էր Պաղեստինի Ազատագրութեան կազմակերպութիւնը (ՊԱԿ), որին ՄԱԿն ընդունել էր որպէս Պաղեստինի շահերի լիիրաւ ներկայացուցիչ:

Նորհրդային Միութեան, Միացեալ Նահանգների եւ այլ խոշոր տէրութիւնների՝ այս հակամարտութեան լուծումը գտնելու բոլոր փորձերը, բնականաբար, դատապարտուած էին անյաջողութեան, քանի որ Իսրայէլա-պաղեստինեան հակամարտութիւնը «ստոր պատերազմի» ռազմադաշտերից մէկն էր: Այդ փորձերից մէկն աւարտուեց Քէմփ Տէյպլիտի համաձայնագրով, որը ստորագրուեց 1978 թուականին Իսրայէլի վարչապետ Մ. Պեկինի եւ Եգիպտոսի նախագահ Ա. Սատաթի միջեւ՝ Միացեալ Նահանգների նախագահ Քարթըրի աշխուժ օժանդակութեամբ, եւ որը, լուրջ տարածանքներով մտցնելով արաբական շարքերում, թուլացրեց նրանց ուժերը:

1988 թուականի Պաղեստինի Ազգային խորհուրդը հռչակեց Պաղեստինի Հանրապետութիւնն իր մայրաքաղաք Երուսաղէմով:

1990 թուականին Միացեալ Նահանգների նախագահ Ժ. Պոուզ աւագն առաջարկեց երուսաղէմեան հրեաներին տալ նոյն կարգավիճակը, որն ունէին նրանց հայրենակիցները կազայում եւ Արեւմտեան Ափում: Այդ յայտարարութիւնից յետոյ հրէական լուսին ձեռնարկեց քայլեր, որոնց պատճառով Միացեալ Նահանգների Քոնկրէսը ճանաչեց Երուսաղէմը որպէս Իսրայէլի մայրաքաղաք:

1999 թուականին ստեղծուած իրավիճակը, թերեւս, կարող էր յանգեցնել հակամարտութեան լուծմանը: խորհրդային Միութեան փլուզումից, 1999 թուականին Սուրիայի առաջնորդ Հաֆէզը այլ առատի մահուանից, Իրաքի ջախջախումից եւ մեկուսացումից յետոյ բոլորը սպասում էին Քլինթոնի վերջին շարժումին՝ ենթադրելով, որ նա մինչեւ Սպիտակ Տանը հրաժեշտ տալը կը փորձի վերջ տալ այս երկարատեւ հակամարտութեանը: Սակայն 1999ի Քէմփ Տէյպլիտի բանակցութիւններն աւարտուեցին անարդիւնք: Կողմերը չկարողացան զալ համաձայնութեան, բանակցութիւնները դադարեցուցին:

Հակամարտութեան կարգաւորման գործընթացում որպէս երրորդ կողմ հանդէս է եկել նաեւ Վատիկանը: Հռոմի պապը երկու կողմերի հետ ստորագրել է անջատ պայմանագրեր Երուսաղէմի հարցի վերաբերեալ եւ, ի հարկէ, երկու կողմերն էլ դժգոհութիւն են արտայայտել Վատիկանի եւ հակառակորդ կողմի միջեւ կնքուած պայմանագրերի կապակցութեամբ: Մինչդեռ Վատիկանի ժասնակցութիւնը կարգաւորման գործընթացում կարելի է մեկնաբանել ոչ միայն որպէս խաղաղարարութիւն, այլեւ՝ որպէս քրիստոնէական համայնքի շահերի ներկայացուցիչ մասնակցութիւն:

## ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պաղեստինեան կողմի պաշտօնական դիրքորոշումը հետեւեալն է.

Քուտսը (այսինքն՝ Հին Երուսաղէմը) պէտք է լինի Պաղեստինի կազմում, որպէս այդ պետութեան մայրաքաղաք: Քաղաքի մնացած մասը, որը հիմնականում կառուցուել է 19-20րդ դարերին, պէտք է անցնի Իսրայէլին:

Այս հարցում շատ մեծ դեր է խաղում պաղեստինեան մտաւորականութիւնը: Պաղեստինցի քաղաքագէտ Մահտի Ապտէլ Հատին համարում է, որ Երուսաղէմը պէտք է լինի միասնական եւ անքակտելի, քանի որ միայն այդ դէպքում կը պահպանուի քաղաքին բնորոշ հոգեւոր միջոցները, որը եւ դարձնում է Երուսաղէմը պատմական, մշակութային, քաղաքական եւ Սուրբ Քաղաք:

Իսրայէլը չի կարող ընդունել այս պայմանները: Պատճառները մէկը, ինչպէս արդէն նշուել է, հրէական թաղամասի եւ հրէական սրբավայրի՝ Լացի պատի առկայութիւնն է Հին Քաղաքում: Հրեաները համարում են, որ Իսրայէլին պէտք է անցնի նաեւ հայկական թաղամասը, քանի որ այն ապահովում է հրէականի անվտանգութիւնը:

Բացի երկու երկրների դիրքորոշումներից, գոյութիւն ունեն նաեւ այլ մտտեւորական:

1.- Երուսաղէմը ստանում է յատուկ կարգավիճակ եւ անցնում է ՄԱԿի Անվտանգութեան խորհրդի հովանաւորութեան տակ: Սա, ըստ հուլիսեան, 1947 թուականի ՄԱԿի թիւ 181 բանաձեւով նախատեսուած տարրերն է:

2.- Երուսաղէմը ստանում է «Սուրբ» քաղաքի կարգավիճակ եւ ղեկավարում է երեք միաստուածեան կրօնների ղեկավարների համատեղ ուժերով:

Սրանք են, ահա, հարցին վերաբերող «չոր» փաստերը, որոնք, սակայն, թոյլ են տալիս առանձնացնել այս խնդիրը կազմող եւ խնդրի

լուծման վրայ ազդող՝ երեք հիմնական գործօններ. արժէքաբանական, քաղաքական եւ իրաւական: «Չոր» փաստերը ցոյց են տալիս նաեւ, որ այս գործընթացը պայմանաւորուած է տարբեր շահերով եւ այդ շահերից բխող տարբեր դիրքորոշումներով:

Պէ՞տք է արդեօք Հայաստանի Հանրապետութիւնը, որպէս աշխարհի մաս կազմող պետութիւն, ունենալ իր դիրքորոշումն այս խնդրի վերաբերեալ: Փորձենք մօտենալ այս հարցին վերջ նշուած երեք գործօնների տեսանկիւնից:

## ԱՐԺԵՔԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Հայ Առաքելական եկեղեցին իր տեղն ու դերն ունի Երուսաղէմին բնորոշ յատուկ միջոցներում: Հայկական պատրիարքարանին դարբեր շարունակ պատկանում է Փրկչի գերեզմանի պահպանի պատուաւոր դերը: Բացի այդ, Ս. Յակոբի միաբանութիւնը մեծ հեղինակութիւն ունի ոչ միայն Երուսաղէմում, այլեւ՝ ամբողջ քրիստոնէական աշխարհում: Անդրադառնալով Վատիկանի մասնակցութեանը՝ կարելի է ենթադրել, որին, որ նոյն կարգավիճակով հակամարտութեան կարգաւորմանը կարող է մասնակցել նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը: Հայաստանն է, որ պէտք է պաշտպանի սփիւռքահայութեան իրաւունքներն ու շահերը (մասնաւորապէս Երուսաղէմի հայերի մեծ մասը չունի Իսրայէլի քաղաքացիութիւն): Արժէքաբանական տեսանկիւնից չափազանց կարեւոր է նաեւ Հայ Առաքելական եկեղեցու մասնակցութիւնն այս հարցի լուծմանը, քանի որ Երուսաղէմում են գտնուած եկեղեցու համար մեծ հոգեւոր արժէք ներկայացնող սրբավայրեր: Սփիւռքը նոյնպէս պէտք է արժանանալ Իսրայէլում տեղի ունեցած վերջին իրադարձութիւններին: չէ՞ որ Հայ Առաքելական եկեղեցու Երուսաղէմի պատրիարքութեան հողերի ռոնագրաւումը, փաստօրէն, Քէմփ Տէյպլիտում է հուր Պարաքի նշած Իսրայէլի նպատակներից մէկն է:

## ԻՐԱՄԱՍՆ ԳՈՐԾՈՆ

Հայ Առաքելական եկեղեցու Երուսաղէմի պատրիարքութեան հողերի բռնագրաւումն Իսրայէլում բնակուող հոր հայրենակիցների նկատմամբ ճնշում գործադրելու առաջին փորձը չէ: Իսրայէլի իշխանութիւնները հնարաւորութեան դէպքում խոչընդոտել են պատրիարքարանի կամ հայկական թաղամասի տարածքում վերանորոգումներին եւ նոր շինութիւնների կառուցմանը: Նպատակն ակնյայտ է. վատթարացնելով Երուսաղէմի հայութեան կեանքը թաղամասում՝ ստիպել հայ բնակչութեանը վաճառել իրենց պատկանող տարածքները: Այդպիսով կը մեծանայ Երուսաղէմի հրէական թաղամասը, եւ հայկական թաղամասի միջոցով կ'ապահովուի քաղաքում բնակչուցի հրեաների անվտանգութիւնը: Այս ամէնը պէտք է առաջացնի իշխանութիւնների անհանգստութիւնը եւ ստիպի միջոցներ ձեռնարկել ստեղծուած խնդիրը լուծելու նպատակով:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Հայաստանը շահագրգռուած է հակամարտութեան կարգաւորմամբ եւ պատասխանատու է Երուսաղէմի հայ բնակչութեան եւ պատրիարքութեան համար: Պատրիարքութեան վերաբերեալ կարեւոր է նաեւ էլմիածնի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի դիրքորոշումը:

Անհրաժեշտ է թուում, որ Հայաստանի իշխանութիւնները, Սփիւռքը, Հայաստանի հասարակութիւնն ու Հայ Առաքելական եկեղեցին միաւորեն իրենց ուժերը եւ պաշտպանեն հայութեան շահերն այս հարցի լուծման ընթացքում:

Հայաստանի հասարակութիւնը պէտք է միջազգային հանրութեան ուշադրութիւնը բեւեռի Հայ Առաքելական եկեղեցու Երուսաղէմի պատրիարքութեան իրաւունքների խախտման վրայ: Միաժամանակ պաշտօնական Երեւանը պէտք է դիմի Իսրայէլի կառավարութեան բռնագրաւման հրամանագիրը չեղեալ համարելու պահանջով:

Բնականաբար Հայաստանն ունի իր շահերը միջինարեւելեան հակամարտութեան կարգաւորման մէջ, եւ այդ շահերը պահանջում են հակամարտութեան կարգավորումը խաղաղ միջոցներով, արդար եւ վերջնական խաղաղութեան հաստատում, որի միակ առհասարակ համարձակ պահանջով է:





# ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ԹՆՃՈՒԿԸ ԵՒ ...

Շարունակում՝ 5րդ էջէն

Շատ կարեւոր է նաեւ հայկական համայնքներին առկայութիւնը հակամարտութեան անմիջական մասնակիցներ Սուրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Յորդանանում, Իսրայէլում, ինչպէս նաեւ կարգաւորման գործընթացի աշխուժ մասնակիցներ Միացեալ Նահանգներում եւ Ֆրանսայում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշումն արարա-իսրայէլեան հակամարտութեան հարցում կարելի է ձեւակերպել հետեւեալ կերպ.

1.- Երուսաղէմի հայկական համայնքին, ինչպէս նաեւ Հայ Առաքելական եկեղեցուն Երուսաղէմի պատրիարքութեանը ձեռնուու է հակամարտութեան արագ եւ վերջնական կարգաւորումը, որը վերջ կը տայ հայերի արտագաղթին Երուսաղէմից, եւ նրանց, ինչպէս նաեւ պատրիարքարանին չի սպառնայ դարձեալ շարունակ իրենց սեփականութիւն եղած տարածքների կորուստը:

2.- Հայաստանին առաւել ձեռնուու է Երուսաղէմին միջազգային քաղաքի կարգավիճակի շնորհումը: Այլապէս կան մտավախութիւններ, որ եթէ քաղաքն անցնի այս կամ այն կողմին, դեռ երկար ժամանակ չեն դադարեցուի «Համաս» եւ «Հըզպալլա» կազմակերպութիւնների ռազմական պայքարը եւ իսրայէլեան բանակի պատասխան գործողութիւնները: Իսկ միջազգային քաղաքի կարգավիճակը կ'ապահովի քաղաքի բնակիչներին եւ հազարաւոր ուխտագնացներին անվտանգութիւնը: Ցաւօք, վերջին իրադարձութիւններն այդ չեն վկայում, եւ Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է կիրառի միջոցներ, որոնք կը պաշտպանեն Երուսաղէմի հայ համայնքի եւ եկեղեցու շահերը:

Ստեղծուած պայմաններում մեր հասարակութիւնը կարող է արժանապատիւ պատասխան գտնել այս մարտահրաւէրին միայն դրսեւորելով իր միասնականութիւնը եւ պատմական պահի ճիշդ ըմբռնման կարողութիւնը: Նա պէտք է ինքը նախաձեռնի Հայ եկեղեցուն պատկանող սրբավայրերի եւ կալուածքների պաշտպանութեանն ուղղուած բոլոր հնարաւոր քայլերը, ինչպէս նաեւ պահանջի Հայաստանի նախագահից, կառավարութիւնից, արտաքին գործոց նախարարութիւնից գործնական միջոցներ գտնել հայութեանը շահերի պաշտպանութեան համար եւ հաշուետու լինել ժողովրդի առջեւ դրանց իրականացման արդիւնքների մասին:

«ԱՉՂԱԿ»-ի ՀԵՌԱԶՄԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱՉՂԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

## ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5239 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ՇՐՈՂՈՒՄԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵՆ
1. Շիրվանզադէի երկերէն:	1. Ժամհար - Արական օտար անուն:
2. Ամպրոպ - Կարմիր ներկ:	2. Զաչիր - Պոչ:
3. Իրերայաջորդ տառեր - Կտանք քաղաքի նախկին անուանումը:	3. Կրկնուած բաղաձայններ - Տանձի տեսակ մը:
4. Շրջուած՝ գլանաձեւ ընդունարան - Վաղեհիկ:	4. Արական անուն - Հրանիւթ:
5. Կառքի շրջանակ - Արաք իշխան:	5. Մակոյկ - Համեմը շատ - Կրկնուած բաղաձայններ:
6. Բոցեղէն:	6. Նորվեգիացի բեւեռախոյզ Ֆրիտոֆ - Բոստոն:
7. Իրկից գիրեր - Կրկնուած բաղաձայններ - Հասակ:	7. Ինչպէս - Թրքական գաղտնի սպասարկութիւն - Մտածում:
8. Եւրոպական հանրապետութիւն - Այր:	8. Երանի՝ թէ (երկու բառ):
9. Իգական անուն - Իրերայաջորդ տառեր - Ժամանակ:	9. Անքաղաքավար - Զորարարէլի որդին:
10. Խանդ - Լեռնէ գլտորող ձիւնակոյտ:	10. Տղայ - Կանացի պատուանուն:
11. Ամբողջ կտոր - Զերմուկներ գտնող իշապանը:	11. Այրուբենէն - Գնդասել - Յուցական անուն:

ԹԻԻ 5238  
ԽԱՉԲԱՌԻՆ  
ԼՈՒԾՈՒՄԸ

ՍԱԿԱՐԱՆ		
Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.		
Սուրիական թղթուկի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Քուէյթեան տինար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տինար	408,41 - 412,42	լ.ն.
Քաթարեան տինար	412,16 - 416,15	լ.ն.
Սէուտական տինար	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան տինար	3900,00 - 3930,00	լ.ն.
Եգիպտական կինէ	321,71 - 325,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2347,65 - 2351,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1018,25 - 1014,52	լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2605,10 - 2609,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,65 - 12,70	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	967,50 - 969,85	լ.ն.
Աստրալիական տոլար	829,95 - 833,70	լ.ն.
Եւրո	1492,90 - 1496,16	լ.ն.
● ՈՍԿԻ		
Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մեքսիկական փէտոս	569,500 - 589,500	լ.ն.
Մէկ քիլոյրկի		
ճոյ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օսու ոսկի	310,68 - 314,72	\$
Մէկ օսու արծաթ	4,47 - 4,51	\$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակաբեր.		
Եւրո	0.9909	
Քանադական տոլար	1.5532	
Չուիցերիական ֆրանք	1.483	
Ճափոնական եէն	117.22	
Մէկ սթերլին	1.5565	
● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՄՆԵԹՈՒՂԹԵՐ		
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում		
Ա. կարգի	5	5
Բ. կարգի		
բաժնետիր		

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ  
ԱՐՓԻ ԾԱՆՍԸՉԵԱՆԻ մահուան Ա. տարեիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Դամասկոսի Հայ Կաթողիկէ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 9:30ին:

ԴԱՄԱՍԿՈՍ ԴԱՄԱՍԿՈՍ  
ԿԻՆԻՏԵՐԻ ՕԳՈՒՍՈՒՇԵԱՆԻ (ծնեալ՝ ՍԻՍՈՒՆԵԱՆ) մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Դամասկոսի Ա. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՅԱՍՄԻԿ ՊԵՃՏԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Սեպտեմբեր 2002, Ժուհի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)  
Կարելիութեան սահմանին մէջ այս յետմիջօրէն յատկացուցէք ձեր գաւակներուն, տեղի տալով անոնց քանի մը քմայքներուն:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)  
Ընտանիքի մէջ բախումներ կրնաք ունենալ: Ձեր լեզուն պիտի երկարէ քիչ մը, պաշտպանելու համար ձեր իրաւունքները: Ստիպողաբար պիտի պատասխանէք ամեհուն:

☆ **ԲԻԿՈՒՆՆԵՐ** (22 Մայիսէն 21 Յունիս)  
Ձեր դրացիներուն հետ հաշտ պարելու համար չափաւորեցէք ձեր առաջարկները: Ներողամիտ եղէք անոնց թերիներուն, որպէսզի ձեր միջեւ ըսի - ըսաւը չերկարի:

☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)  
Ձեր ծախսերը կրնան ցած, որպէսզի պարտական չի մնաք: Մէկ կողմ դրեք ձեր նկատի առած աւելորդ գնումները, որպէսզի անտեղի գումարներ չի մսխէք:

☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)  
Այսօր գրաւչութիւն մը պիտի ունենաք, պիտի փայլիք, ու ոչ ոք պիտի հաւատայ, թէ դուք առանձին էք եւ դժբխտ:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)  
Եթէ անցնող ամառ մարգակն վարժութիւններ կատարած էք, մի դադարեցուցէք զանոնք, շարունակեցէք նոյն ճիւղերը: Ամէն շաբաթ յատուկ պահ մը վերապահեցէք ֆիզիքական ձեր առողջութեան:

☆ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)  
Երկար առեցէք ի վեր հարց մը ձեր մտքին մէջ կ'ենայ, կ'ուզէք զայն իրագործել: Այսօր պահն է այդ հարցը կարգադրելու:

☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)  
Կ'ուզէք ձեր շախտանքին մէջ փոփոխութիւններ մտնել. եղածը պահել, կամ կրկնապատել ձեր ջանքերը: Բայց իրապէս ունիք ուժը սպառելու առ ոչ անկէ...

☆ **ԱՂԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)  
Փոքր հարցեր եւ խանգարումներ՝ այս ցոր ամսուան ընթացքին, բայց առանց հետեւանքի: Վերջերս ձեր հանդիպած բարեկամները ձեզի պիտի առաջարկեն հետաւոր ճամբորդութիւն մը: Ընդունեցէք:

☆ **ԱՅՅԵՂԶԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)  
Ոչ մէկ պատճառ պիտի կասեցնէ ձեր ետանդը այս ամսուան ընթացքին: Ձեր նիւթական վիճակը պիտի ունենայ վերիվայրում, ինչ որ պիտի ազդէ ձեր տրամադրութեան: Ձանցեցէք կայուն պահել ձեր ելեւմուտքը:

☆ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)  
Հակառակ կարգ մը թեթեւ հոգեբան, պիտի ունենաք յաջող շաբաթ մը: Այսօր սակայն պիտի դժկամիք «այո» ըսելու ձեր ընկերոջ հարցերուն: Սանձ մը դրեք ձեր անօգուտ քմայքին:

☆ **ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)  
Չուցե եղէք ամսուան ընթացքին: Կրնաք ունենալ դատողութեան սխալ կողմնորոշում: Աշխատանքի ձեր բարեկամութիւնը՝ անձի մը հետ կրնայ վերածուիլ խակակն մտերմութեան: Ուրեմն յաճախակի տեսակցութիւններով պահպանեցէք այս բարեկամութիւնը:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՆ / ԵՐԳԱՀԱՆԴԷՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

## ՖԻԼԻՓ ՄԱՆՈՒԷԼ ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ԲԵՐԷ ՆԻՒ ՕՐԼԻՆՉԻ ՃԷՉԸ



Միացեալ Նահանգներու Նիւ Օրլիան նահանգը կը հանդիսանայ ժամանակակից ամերիկեան երաժշտութեան բնօրրան: Հոն, որ պարագան ձեռն ու պլուզը եւ ժամանակի ընթացքին ձեւակերպուեցաւ ողբէն տոլը: Ամերիկեան երաժշտութեան մայրաքաղաքն է Լիբանան ժամանած է երգիչ-երաժիշտ Ֆիլիպ Մանուէլ, որ կ'ընդամենը «Պլու նոթ քաֆէ» եւ «Միուիք Քուէս» հաստատութիւններու հրատարակած ծանօթանալ կարենաւ անոր:

Վերջին տարիներուն արեւտագէտը մնայուն ձեւով կը մասնակցի Լուիզիանայի Ֆիլիպսիանիք Նիւ Կալիֆորնիայի եւ «Պէթըն Հիլ» սիմֆոնիք նուագախումբին ելոյթներուն:

Միացեալ Նահանգներու մէջ իբրեւ երգիչ եւ երաժիշտ կ'արձանագրէ մեծ յաջողութիւն: Իր մասին «Ուաշինկթըն Փոսթ» «Ֆիլիպ Մանուէլ առաջնակարգ արեւտագէտ մըն է, որ գիտէ հաղորդակցիլ իր ունկնդիրներուն հետ եւ իր ոժականութեամբ ու մագնիսական հմայքով կը գրաւէ անոնց ուշադրութիւնը»:

Ֆիլիպ Մանուէլի բոլոր երգերը ցարդ չեն ամփոփուած մայնսայակներու մէջ: Ան օժտուած է պրապիլական երաժարութեան գործեր յաջողութեամբ ներկայացնելու շնորհքով: Երգեր յորինած է մեծ թիւով ժապաւէններու համար:

1999ին Ֆիլիպ Մանուէլը հրապարակ իր իրաւապաշտի երգերու յաւաքը: Իր մասին կը գրէ հետեւեալը. «Ֆիլիպ Մանուէլ առաջնակարգ արեւտագէտ մըն է, որ գիտէ հաղորդակցիլ իր ունկնդիրներուն հետ եւ իր ոժականութեամբ ու մագնիսական հմայքով կը գրաւէ անոնց ուշադրութիւնը»:

Ֆիլիպ Մանուէլի պատկերն է տասնամեակներէ ի վեր երաժարուեստի եւ պարարուեստի մէջ մասնագիտացած ընտանիքի մը: Ան իր առաջին մայնսայակը կը պատրաստէ տասնվեց տարեկանին: Յաջորդ տարիներուն,

Լիբանանի մէջ Ֆիլիպ Մանուէլը ելոյթներ կ'ունենայ «Պլու նոթ քաֆէ»-ի մէջ, մինչեւ 14 Սեպտեմբեր, բացի 8 Սեպտեմբերէն: Անոր ելոյթներուն կ'ընկերակցի Լիբանանցի երաժիշտներու քառնակ մը:

## ՀԵՌԱՏԵՍԻԼ

Թ. Է. Լ.	Թ. Գ. Ե. Լ.	Թ. Գ. Ե. Լ.
10:00 - Սապահօ	13:05 - Ամերիկեան ֆիլմաշար՝ «Նոթք լինտինկ»	12:00 - Լուր
12:30 - Միւլիք հոյ	14:00 - Անգլերէն լուրեր	12:05 - Երաժշտական այիք
13:00 - Մարուլ հանա	14:20 - Ֆրանսերէն լուրեր	13:00 - Լուր
14:00 - Եւրոնիւիզ	14:40 - Հայերէն լուրեր	13:05 - Top 10 (կարճ տարբերակ)
14:30 - Լուրեր	15:05 - Լուրեր	13:25 - Ակունք (սպալիս երգ)
15:00 - Մըշուար	15:30 - Մարայա 97	13:45 - Նորաձեւութիւն
17:30 - Ֆիլմաշար	16:30 - Թելեթապիկ	13:55 - Նոթատետր
18:30 - Կենդ. գծանկար	17:00 - Ըզրար ըջպար	14:00 - Լուր
19:30 - Արաք. լուրեր	17:30 - Մալիպու	14:05 - Երաժշտական այիք
21:30 - Տեղական ֆիլմաշար	18:00 - Արաքական ֆիլմաշար	15:00 - Հայլուր
20:00 - Մոտելիս	19:00 - Այ Ֆախ	15:20 - Մուլտեմիկալ «Վերջին սպասանը»
22:30 - Տեղական ֆիլմաշար	20:00 - Արաքերէն լուրեր	15:35 - Իմ սէր, իմ հաւատ, իմ եկեղեցի
23:00 - Ամերիկեան ֆիլմաշար	20:30 - Ռուսում մութահարիւս	16:00 - Հեռուստատեսիկալ «Միտոյ կախարդանք»
23:30 - Ե. Թ. Վ. Բ. 6:30 - Լուրեր	20:35 - Պէթ սելըր՝ «Էրմիք Թրէյն»	17:00 - Երեկոյեան Երեւան ֆիլմ «Վէճ»
7:30 - Թելէ մաթէն	22:30 - Զրայմ սին ինվեսթիկէյշընկ Էֆթըր»	17:20 - Փաստագրական ֆիլմ «Վէճ»
09:30 - Զիլիս	23:30 - «Անհէփիլի Էվըր»	17:50 - Մանրամասներ
10:30 - Զիլէ քի	Ե. Գ. Ե. Լ. 13:00 - Վաւերագրական	18:00 - Այլուր
11:00 - Ուս թընսա	14:30 - Թաւաքիք ալ ետում	18:10 - Կնք հմայքի գաղտնիքը
11:30 - Զրլ մէյլէ այլէ	15:00 - Լուրեր	19:00 - Հայլուր
12:00 - Էմ. Թ. Վ. Բ. 12:30 - Էս. Է. Ե. Լ. 13:00 - Արեւմտեան Ֆրանս 2	16:00 - Պիթաժարրոտ	19:45 - Արական նշան
14:00 - Տուրնայ	17:30 - Մինեմա/35 mm	20:00 - Փաստագրական սերիալ «Գարի հսկաները»
14:45 - Սի. Է. Ե. Լ. Ի. լուրեր	18:00 - Նո ըրմէնք	«Ճանապարհ եւ արագութիւն»
15:15 - Անանի աղանի	18:15 - Տեղական յայտագիր	21:00 - Ռուլըթնէ
16:30 - Փոքեմն	19:00 - Լուրեր	22:00 - Հայլուր
17:00 - Մինի սրիտիօ	20:00 - Պուրսա, իքթիսատ, թաքս	22:20 - Կէս գիշերային ձեպընթաց
17:30 - @Էմ. Թ. Վ. Բ. 19:00 - Մակալիս	20:30 - Մուլտասար մութիտ	23:20 - Հայլուր (ռուսերէն)
20:00 - Արաքերէն լուրեր	22:00 - Մասայիս	23:25 - Հայլուր (անգլերէն)
20:30 - Պէթ սելըր	23:00 - Տնտեսական լուրեր	23:30 - Երեկոյեան Երեւան
22:30 - Տիվերիւրման 00:00 - Մոթոր ԵՕ	Ե. Գ. Ե. Լ. 7:30 - Լուրեր	23:45 - Այլուր
7:00 - Սի. Է. Ե. Լ. Ի. լուրեր	8:3	



